Ընդհանուր կրթամասի աշխատաձևավալը 9 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երեք պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում», «Հաշվապահական հաշվառում և աուդիտի հիմունքներ» և «Իրավունքի փիլիսոփայություն»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, *մասնագիտական պարտադիր*

⁸ Սյուսիետ՝ ղ - դասախոսություն, գ - գործնական կամ սեմինար պարապմունք, լ - լաբորատոր աշխատանք:

կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M02	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	3	32/0/0	I	Քննություն
15/M48	Հաշվապահական հաշվառում և աուդիտի հիմունքներ	3	32/0/0	II	Քննություն
16/M02	Իրավունքի փիլիսոփայություն	3	32/0/0	I	Քննություն

Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամվալը ծրագրում սահմանված է 44 կրեդիտ: Մասնագիտորոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

1. Մագիստրոսական ծրագրի՝ «Իրավագիտություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
06/M01	Համեմատական սահմանադրական իրավունք	4	48/0/0	I	Քննություն
06/M02	Պառլամենտական իրավունք	4	32/0/0	I	Քննություն
06/M03	Սահմանադրական հսկողությունը և վերահսկողությունը ՀՀ-ում	3	32/0/0	II	Քննություն
06/M04	Միջազգային կազմակերպությունների իրավունք	3	32/0/0	II	Քննություն
06/M05	ՀՀ զինվորական իրավունք	4	48/0/0	III	Քննություն

06/M06	Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ	5	48/0/0	II	Քննություն
06/M07	ՀՀ ընտրական իրավունք և համակարգեր	3	32/0/0	I	Քննություն
06/M08	ՀՀ և արտասահմանյան երկրների դատական համակարգեր	4	48/0/0	III	Քննություն
06/M09	Իրավունքի աղբյուրների տեսագործական հիմնախնդիրներ	3	32/0/0	I	Քննություն
06/M10	Քաղաքացիական ծառայության իրավական կարգավորումը ՀՀ-ում	3	32/0/0	I	Քննություն
06/M19	ՀՀ գործարարական իրավունք	5	48/0/0	III	Քննություն
06/M33	Իրավաբանական գրագրություն	3	32/0/0	II	Քննություն

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավար ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցառումներ կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավարը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝
«Իրավագիտություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
06/M12	ՀՀ բանկային իրավունք	3	48/0/0	III	Քննություն
06/M13	Պայմանագրային իրավունք	3	48/0/0	II	Քննություն
06/M14	ՀՀ հարկային իրավունք	3	48/0/0	I	Քննություն

06/M15	ՀՀ մաքսային իրավունք	3	48/0/0	I	Քննություն
06/M17	Մարդու իրավունքների պաշտպանությունը Եվրոդատարանում	3	48/0/0	III	Քննություն
06/M34	Իրավաբանական տեխնիկայի (վարպետություն) հիմունքներ	3	48/0/0	II	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 19 կրեդիտ աշխատաժամով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամով:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամով:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժամով:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Իրավագիտության» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Շնորհակալություն և մասնագիտական դասընթացներ

05/M02. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել համակարգչային տարրական գրագիտություն, ծանոթացնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և ուսուցման ոլորտում, ըստ մասնագիտական ուղղվածությունների, դրանց կիրառությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** ինչպիսի նորագույն տեխնոլոգիաներ գոյություն ունեն ներկայումս, որոնք կիրառելի են գանազան գիտությունների ուսումնասիրության և դրանց ուսուցման համար:

2. կկարողանա

2.1. Աշխատել Windows օպերացիոն համակարգում:

2.2. Պատրաստել մասնագիտական բարդության տեքստեր :

2.3. Մշակել էլեկտրոնային աղյուսակներ և կատարել նրանցում միջին բարդության հաշվարկներ:

2.4. Ստեղծել ցուցադրություններ:

2.5. Օգտվել համացանցից և էլ փոստի ծառայություններից:

3. կտիրապետի

3.1. Microsoft Windows օպերացիոն համակարգում ֆայլերի և թղթապանակների հետ աշխատանքների կազմակերպման մեխանիզմներին:

3.2. PowerPoint միջավայրերում տեքստերի, էլեկտրոնային աղյուսակների և ցուցադրությունների պատրաստման մեխանիզմներին և այդ միջավայրերի հնարավորություններին:

3.3. MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝ Աղյուսակների ձևավորում, բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.4. MS Office Word տեքստային խմբագրիչում՝ Տեքստի մուտքագրում, ձևավորում, աղյուսակների կառուցում, բանաձևերի մուտքագրում, օբյեկտների հետ աշխատանք, թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համակարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, էլքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր (Windows XP, Windows 7), հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: **Թեմա 2՝** Համակարգային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3՝** MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային

վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 4**՝ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 5**՝ Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 6**՝ MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

15/M48. Հաշվապահական հաշվառում և աուդիտի հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ֆինանսական հաշվառման և աուդիտի անցկացման հիմունքներին, ֆինանսական հաշվառման խնդիրներին ու շրջանակներին, աուդիտի դերին տնտեսվարման համակարգում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա ֆինանսական վերահսկողության և աուդիտի համակարգի մասին, ինչպես նաև աուդիտորական ստուգումների դերն ու նշանակությունը հաշվապահական հաշվետվության արժանահավատության ապահովման գործում:

2. կկարողանա ինքնուրույն իրականացնել ֆինանսական վերահսկողություն, կազմել աուդիտորական եզրակացություն, ճիշտ գնահատել աուդիտորական ռիսկն ու էականությունը:

3. կտիրապետի

3.1. աուդիտի անցկացման ձեռքն ու մեթոդներին,

3.2. ներքին վերահսկողության համակարգի հուսալիության եւ արդյունավետության գնահատմանը,

3.3. հաշվապահական հաշվառման մեջ արտացոլված հաշիվների շրջանառության եւ մնացորդների մանրամասն ստուգման ձեռքն ու մեթոդներին,

3.4. ըստ հաշվապահական հաշիվների բնորոշ սխալները առանձնացնելուն,

3.5. աուդիտի անցկացմանը անհատական համակարգիչների օգնությամբ,

3.6. աշխատանքային փաստաթղթերի ձևակերպմանը,

3.7. աուդիտորական ապացույցների տեսակներին եւ հավաքագրմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆինանսական վերահսկողության և աուդիտի համակարգը: **Թեմա 2**՝ Ստուգման և վերահսկման էությունը: **Թեմա 3**՝ Պլանավորումը և աուդիտորական պայմանագրերի կնքումը: **Թեմա 4**՝ Աուդիտորական գործունեության կազմակերպումը: **Թեմա 5**՝ Հաշվապահական հաշվետվության համակարգի ուսումնասիրությունը գնահատումը: **Թեմա 6**՝ Աուդիտորական եզրակացությունը և նրան ներկայացվող պահանջները: **Թեմա 7**՝ Հիմնական միջոցների հաշվառման վերահսկողությունը: **Թեմա 8**՝ Ապրանքանյութական պաշարների հաշվառման աուդիտը: **Թեմա 9**՝ Ոչ նյութական ակտիվների հաշվառման աուդիտը: **Թեմա 10**՝ Հարկերի և հաշվարկների հաշվառման աուդիտը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16/M02. Իրավունքի փիլիսոփայություն (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ իրավագետ մագիստրանտներին ծանոթացնել իրավունքի, օրենքի փիլիսոփայական ըմբռնումների և հայեցակարգի հետ, նրանց մեջ ձևավորել իրավունքի փիլիսոփայության պատմության իրավական հիմնահարցերի փիլիսոփայական հիմքերը տեսնելու, դրանք հասկանալու և վերլուծելու հետազոտական ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կծանոթանա և **պատկերացում կկազմի** անցյալի իրավագետ փիլիսոփաների տեսական ժառանգության մասին

2. ձեռք կբերի հիմնարար իրավագիտական հասկացությունների փիլիսոփայական հիմքերը ըմբռնելու և դրանք հետազոտելու ունակություններ

3. կկարողանա ծանոթանալ XXդ. իրավունքի փիլիսոփայության հիմնական հայեցակարգի հետ

Բովանդակությունը.

Թեևս 1՝ Իրավունքի փիլիսոփայությունը: **Թեևս 2՝** Ցիցերոնի իրավափիլիսոփայական հայացքները: Հռոմեական իրավագետները: **Թեևս 3՝** Ժան Բոդենի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեևս 4՝** Հուգո Գրոտիուսը որպես իրավական ռացիոնալիզմի հիմնադիր: **Թեևս 5՝** Թոմաս Հոբսի էտատիզմի փիլիսոփայությունը: **Թեևս 6՝** Ջոն Լոկը որպես իրավաբանական լիբերալիզմի հայրը: **Թեևս 7՝** Ֆրանսիական լուսավորիչների իրավափիլիսոփայական հայացքները (Մ. Վոլտեր): **Թեևս 8՝** Շառլ Լուի Մոնթեսքյոի իրավափիլիսոփայական հայացքների առանձնահատկությունները: **Թեևս 9՝** Ժան Ժակ Ռուսսոյի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեևս 10՝** Ի. Կանտի իրավափիլիսոփայական հայեցակարգը: **Թեևս 11՝** Գ.Ֆ. Հեգելի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեևս 12՝** Ամերիկյան իրավափիլիսոփայական միտքը (Բ. Ֆրանկլին, Թ. Ջեֆերսոն, Ռ. Համիլտոն և ուրիշներ): **Թեևս 13՝** Ֆրանսիական լիբերալիզմ (Բ. Կոնստան, Ա. Թոքվիլ): **Թեևս 14՝** Եվրոպական իրավափիլիսոփայական միտքը XIX դարի երկրորդ կեսին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-1, 2) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Զարգացնել ուսանողների մասնագիտական բանավոր և գրավոր խոսքը, խորացնելու և ընդլայնելու լեզվական և արտալեզվական գիտելիքները, ընդլայնելու մասնագիտական բառապաշարը, մասնագիտական թեմատիկ տեքստերը կարդալու և յուրացնելու հմտությունները: Մասնագիտական օտար լեզվի ուսուցումը ենթադրում է ուսուցման բովանդակության համապատասխան ընտրություն, որով և պայմանավորվում է բառային ու քերականական միավորների, ինչպես նաև հաղորդակցման միջոցների գործածությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում լեզվակրի խոսքը լսելու և ըմբռնելու, լսած տեքստը վերլուծելու և վերարտադրելու հմտությունների ու ունակությունների զարգացման վրա: Այն խթանում է ուսանողների՝ անգլերենով շփվելու, մասնագիտական ոլորտում գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** Թեմատիկ բառապաշարը, հոմանիշային շարքերը, կայուն բառակապակցությունները, լեզվական տարբեր իրավիճակներին բնորոշ ոճերը:

2. **կկարողանա**

1.1. Ընթերցել հասկանալ, վերլուծել բնագրային մասնագիտական տեքստը,
1.2. Քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշարը,

1.3. Ճիշտ համատեքստում օգտագործել իրավաբանական եզրույթները և կայուն բառակապակցությունները,

1.4. Լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և մասնագիտական տեղեկատվությունը, ինչպես նաև վերարտադրել և վերլուծել լսածը նյութը,

1.5. Կարդալ և վերարտադրել ցանկացած մասնագիտական հոդված և նյութ:

3. կտիրապետի

3.1. Թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարին,

3.2. Գրավոր խոսքի շարադրման առանձնահատուկ կառույցներին,

3.3. լեզվակրի խոսքը լսելու և ըմբռնելու, լսած տեքստը վերլուծելու և վերարտադրելու հմտություններին ու ունակություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայտորոշիչ գնահատում. նպատակը խմբի լեզվական գիտելիքների, հմտությունների և արժեքների մակարդակի որոշումն է հետագա ուսուցումն արդյունավետ կազմակերպելու նպատակով: **Թեմա 2**՝ Useful Verbs in Law, Words Associations 1 and 2, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 3**՝ Opposites – 2, Name the crime – 1, Who’s speaking? Name the crime – 1, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 4**՝ Useful Verbs in Law (Past Tense and Mixed Tenses), Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 5**՝ Prepositions, Odd One Out, Pronunciation 1&2, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 6**՝ Adjectives in Law – 2; Abbreviations in Law, Name the crime – 2, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 7**՝ Test. **Թեմա 8**՝ Project. **Թեմա 9**՝ The scope of law, legal system and legal professionals, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 10**՝ Contracts and Agreements , Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 11**՝ Employment law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 12**՝ Civil Law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 13**՝ Company law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 14**՝ International law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 15**՝ Project. **Թեմա 16**՝ Final test. **Թեմա 17**՝ The Legal Profession – Working in Law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 18**՝ The Legal Profession – Starting a Claim in Civil Law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 19**՝ The Legal Profession – Areas of Law, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 20**՝ The Legal Profession – The importance of collocations, the importance of prepositions, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 21**՝ The language of employment law – Being an employer, An employment contract, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 22**՝ The language of employment law – Reading a contract case, contract law in practice, starting a claim for breach of contract, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 23**՝ Test. **Թեմա 24**՝ Project. **Թեմա 25**՝ The language of contract law – The elements of contract, reading a contract case, offer and acceptance, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 26**՝ The language of contract law – the contract in practice, starting a claim for breach of contract, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 27**՝ The language of banking - a new bank account, working in bank, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 28**՝ The language of banking - Loans, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 29**՝ Understanding contracts – The different parts of a written contract, parties and recitals, Vocabulary analysis, listening and speaking. **Թեմա 30**՝ Understanding

contracts – Defined terms, the key obligations, delivery of goods and services, Vocabulary analysis, listening and speaking. *Թեմա 31* 'Project. *Թեմա 32* 'Final test.

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

06/M01. Համեմատական սահմանադրական իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն, ինչպես նաև (համեմատական սահմանադրական իրավունքի հետ միասին) որպես դասընթաց:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա ՀՀ և արտասահմանյան սահմանադրական իրավունքը:

2. կկարողանա համեմատել և վերլուծել ՀՀ և արտասահմանյան սահմանադրական իրավունքը:

3. կտիրապետի

ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում սահմանադրաիրավական նորմերին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սահմանադրական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց, Սահմանադրական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ, Սահմանադրական իրավունքը՝ որպես գիտություն և ուսումնական դասընթաց: *Թեմա 2*՝ Սահմանադրությունների ժամանակակից մոդելները, Սահմանադրության հասկացությունը և բովանդակությունը: Սահմանադրությունների մշակումը, ընդունումը, փոփոխումը և դադարումը: *Թեմա 3*՝ Պետության ձևի սահմանադրաիրավական հիմունքները, Պետության կառավարման ձևը, Պետության տարածքային կառուցվածքի ձևը, Պետության ռեժիմի ձևը: *Թեմա 4*՝ Օրենսդիր իշխանությունը, Խորհրդարանի հասկացությունը և սոցիալական գործառույթները: Խորհրդարանի կառուցվածքը և պատգամավորի կարգավիճակը: *Թեմա 5*՝ Գործադիր իշխանությունը, Պետության գլուխը, Կառավարությունը: *Թեմա 6*՝ Դատական իշխանությունը, Դատական իշխանության ընդհանուր բնութագիրը, Սահմանադրական արդարադատությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M02. Պատվամենտական իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց:

Նպատակը.

ներկայացնել իրավաստեղծ գործունեության հասկացությունը, էությունը և նշանակությունը, իրավաստեղծ գործունեության և օրենսդրության պատմական զարգացումը Հայաստանում, ԱԺ պատգամավորի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, պատգամավորական խմբակցությունները ԱԺ-ում, ԱԺ պատգամավորական խմբերը, դրանց ստեղծման կարգը, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման կազմակերպումը, նստաշրջանները և նիստերի տեսակները, դրանց անցկացման ընթացակարգերը, ինչպես նաև Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու և հանրաքվեի դրվելիք օրենքի նախագծերի քննարկման ընթացակարգը, պետական բյուջեի քննարկումը և հաստատումը ԱԺ-ում: Ուսումնասիրվում են նաև արտասահմանյան մի շարք երկրների, մասնավորապես, ԱՄՆ, Ֆրանսիայի և ՌԴ օրենսդիր համակարգերն ու գործառնության առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

1.1. նորմաստեղծ գործունեության ձևավորման և զարգացման համաշխարհային փորձը,

1.2. ՀՀ ԱԺ պատգամավորի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները,

1.3. իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման կազմակերպումը,

1.4. ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանները, Ազգային ժողովի նիստերի տեսակները, դրանց անցկացման ընթացակարգերը,

1.5. Ազգային ժողովում օրենքի նախագծի քննարկման կարգը,

1.6. միջազգային իրավական և ներպետական իրավական համակարգերի փոխազդեցության հիմնական ուղղությունները,

1.7. նորմաստեղծ համակարգի գործառնության առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում:

2. կկարողանա

2.1. ուսումնասիրել օրինաստեղծ գործունեության հիմունքները, օրենսդիր մարմնի գործառնական հիմնադրությունները,

2.2. ներկայացնել օրենսդրական նախաձեռնության ընթացակարգերը, պատվամենտի իրավասությունը վերապահված հարցերի քննարկման ընթացակարգերը,

2.3. հետազոտել օրենսդիր իշխանության կառույցների և իշխանական այլ ինստիտուտների հարաբերությունների իրավական կարգավորումները թե Հայաստանի Հանրապետությունում, թե արտասահմանյան մի շարք երկրներում:

3. կտիրապետի մեկ ուսումնական դասընթացի շրջանակներում կտիրապետեն իրավաստեղծ գործունեության հիմունքները, օրենսդրական

գործընթացները, օրենքների ընդունման և կիրառման առանձնահատկությունները, նաև օրենսդիր մարմնի կազմակերպական-գործառնության հարցերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իրավաստեղծ գործունեության հասկացությունը, էությունը և պատմական զարգացումը Հայաստանում: **Թեմա 2**՝ Օրենսդիր իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ ԱԺ պատգամավորի իրավական կարգավիճակը: **Թեմա 3**՝ Ազգային ժողովի մարմիններն ու կառուցվածքային տարրերը, գործունեության կարգը: **Թեմա 4**՝ Ազգային ժողովի մշտական և ժամանակավոր հանձնաժողովները, ենթահանձնաժողովներն ու աշխատանքային խմբերը: **Թեմա 5**՝ Կառավարության կողմից իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումը: **Թեմա 6**՝ ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանները և նիստերի տեսակները, դրանց անցկացման ընթացակարգերը: **Թեմա 7**՝ Ազգային ժողովում առանձնացված օրինագծերի քննարկումն ու ընդունման ընթացակարգերը: **Թեմա 8**՝ ՀՀ օրենսդիր մարմնի գործակցությունը ՀՀ Նախագահի հետ: **Թեմա 9**՝ Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման ապահովումը: **Թեմա 10**՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդիր իշխանությունը: **Թեմա 11**՝ Ֆրանսիայի պառլամենտական իրավունքի հիմունքները: **Թեմա 12**՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդիր համակարգը և պալատների փոխգործակցությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M03. Սահմանադրական հսկողությունը և վերահսկողությունը ՀՀ-ում (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

«Սահմանադրական վերահսկողությունը և հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում» դասընթացի նպատակն է դասախոսությունների միջոցով և ինքնուրույն աշխատանքով մագիստրանտների մոտ կայուն գիտելիքներ իմաստավորել սահմանադրական վերահսկողության, սահմանադրական արդարադատության՝ որպես սահմանադրական վերահսկողության ձևի, սահմանադրական վերահսկողության սուբյեկտների և օբյեկտների մասին: Սահմանադրական դատարանի գործունեության հիմքերի, լիազորությունների, Սահմանադրական դատարանի լիազորություններն իրավական ակտերի սահմանադրականության ապահովման և Սահմանադրական դատարանի ընդունած ակտերի բնույթի ու նշանակության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

Դասընթացի լրիվ կուրսը անցնելու արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները ներառում են.

- սահմանադրական վերահսկողության հասկացությունը, տեսակները և ուսումնասիրման մեթոդները, սահմանադրական արդարադատության հասկացությունը և խնդիրները, նախնական և հետագա (հաջորդող), պարտադիր և ֆակուլտատիվ վերահսկողությունը: Սահմանադրական վերահսկողության սուբյեկտների սահմանադրաիրավական կարգավիճակը, օրենքների սահմանադրականության գնահատումը սահմանադրական դատարանի կողմից, միջազգային պայմանագրերի սահմանադրականության գնահատման առանձնահատկությունները, սահմանադրական արդարադատության մարմինների և մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը մարդու իրավունքների ապահովման պաշտպանության բնագավառում:

- Սահմանադրական հսկողության և վերահսկողության հիմնական առանձնահատկությունները, կոնկրետ և վերացական վերահսկողություն, վերահսկողությունն ըստ բովանդակության և ձևի: Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և օբյեկտները, ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության կազմակերպման հիմքերը և լիազորությունները:

- Սահմանադրական դատարանի ընդունած ակտերի բնույթն ու նշանակությունը, Սահմանադրական դատարանի որոշումները, Սահմանադրական դատարանի լիազորությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես Սահմանադրական դատարանի ղեկավարող սուբյեկտ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ «Սահմանադրական վերահսկողություն և հսկողություն» դասընթացի ուսումնասիրման առարկան: **Թեմա 2՝** Սահմանադրական վերահսկողության և հսկողության ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 3՝** «Սահմանադրական վերահսկողություն և հսկողություն» դասընթացի կապը մյուս իրավաբանական գիտակարգերի հետ: **Թեմա 4՝** Սահմանադրական վերահսկողության հասկացությունը և էությունը: **Թեմա 5՝** Սահմանադրական արդարադատությունը՝ որպես սահմանադրական վերահսկողության հատուկ ձև: **Թեմա 6՝** Սահմանադրական վերահսկողության ձևերը: **Թեմա 7՝** Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և օբյեկտները: **Թեմա 8՝** Սահմանադրական դատարանի գործունեության հիմքերը: **Թեմա 9՝** Սահմանադրական դատարանի լիազորությունները: **Թեմա 10՝** Սահմանադրական դատարանի լիազորություններն իրավական ակտերի սահմանադրականության ապահովման բնագավառում: Սահմանադրական դատարանի այլ լիազորությունները: **Թեմա 11՝** Սահմանադրական դատարանի ընդունած ակտերը: **Թեմա 12՝** Սահմանադրական դատարանի լիազորությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: **Թեմա 13՝** Սահմանադրական արդարադատությունը՝ ժողովրդավարության ապահովման երաշխիք: **Թեմա 14՝** Սահմանադրական հսկողության մարմինները, հսկողության ձևերն ու մեթոդները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝
համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M04. Միջազգային կազմակերպությունների իրավունք (3 կրեդիտ)

Շարթթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին համակարգային գիտելիքներ և հմտություններ հաղորդել միջազգային իրավունքի համալիր ճյուղի՝ «Միջազգային կազմակերպությունների իրավունք» առարկայի հիմունքներից, մասնավորապես միջազգային կազմակերպությունների իրավունքի հասկացության, առարկայի, կարգավորման մեթոդի, նորմերի և սկզբունքների, աղբյուրների, միջազգային կազմակերպությունների ճիշտ դասակարգման, իրավասուբյեկտության և իրավասության հիմնահարցերի, միջազգային կազմակերպությունների գործառույթների և իրավաստեղծ գործունեության նշանակության և առանձնահատկություններին: Ծրագրի նպատակներից է նաև ուսանողներին ներկայացնել միջազգային իրավունքի նորմաստեղծման գործընթացում միջազգային կազմակերպությունների դերը, իրավասությունը, միջազգային կազմակերպություններին անդամակցության կարգը, միջազգային-իրավական պատասխանատվությունը և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա միջազգային կազմակերպությունների տեղը և դերը միջազգային իրավունքում և միջազգային հարաբերություններում, միջազգային կազմակերպությունները բնութագրող հատկանիշները, իրավական կարգավիճակը, իրավասուբյեկտության առանձնահատկությունները:

2. կկարողանա բնութագրել միջազգային կազմակերպությունների իրավական բնույթը, դասակարգել ժամանակակից միջազգային կազմակերպությունները՝ ըստ դասակարգման տարբեր չափանիշների, տարբերել և վերլուծել միջազգային իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակը, իրավասուբյեկտությունը, ճիշտ բնութագրել, գնահատել և կիրառել միջազգային իրավական փաստաթղթերը, ինչպես նաև կողմնորոշվել միջազգային կազմակերպությունների մարմինների կողմից ընդունված ակտերի իրավաբանական ուժը գնահատելու հարցերում, տարբերակել միջազգային կազմակերպությունների իրավասությունը և այլն:

3. կտիրապետի առարկայական ծրագրի շրջանակներում ներկայացվող նորմերի և դրույթների վերաբերյալ գիտելիքների, պրակտիկ գործունեության ընթացքում միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների կիրառման և օգտագործման հմտությունների, պայմանագրային նորմերը վերլուծելու կարողությունների և ունակությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային կազմակերպությունների իրավունքի հասկացությունը, առարկան և սուբյեկտները: **Թեմա 2՝** Միջազգային կազմակերպությունների իրավական բնույթը. միջազգային իրավասուբյեկտություն: **Թեմա 3՝** Միջազգային կազմակերպությունների կազմակերպարավական կառուցվածքը, գործառույթները և գործունեության կազմակերպումը: **Թեմա 4՝** Միջազգային

կազմակերպությունների դասակարգումը: **Թեևա 5**՝ Միջազգային կազմակերպությունների մասնակցությունը միջազգային նորմաստեղման գործընթացին (իրավասուբյեկտության հիմնահարցեր): **Թեևա 6**՝ Միջազգային կազմակերպությունների միջազգային իրավական պատասխանատվությունը: **Թեևա 7**՝ ՄԱԿ-ը՝ որպես ընդհանուր իրավասության ունիվերսալ միջազգային միջկառավարական կազմակերպություն: ՄԱԿ-ի իրավունքը: **Թեևա 8**՝ ՄԱԿ-ի հիմնական մարմինների հասկացությունը, նպատակը, խնդիրները և գործառույթները: **Թեևա 9**՝ ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունները, հասկացությունը և առանձնահատկությունները: **Թեևա 10**՝ Տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները (Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության օրինակով):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M05. ՀՀ զինվորական իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Մագիստրանտներին ուսուցանել զինվորական իրավունքի հասկացությունը և աղբյուրները, դերը երկրի ռազմական շինարարության գործում, ՀՀ ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, ռազմական կազմավորման համակարգը երկրի ռազմական անվտանգության ապահովման գործում, պետության պաշտպանության իրավական հիմքերը, պաշտպանության բնագավառի կառավարման համակարգը, ՀՀ քաղաքացիների՝ երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը, կատարման ձևերը, զինվորական ծառայության հասկացությունը, բովանդակությունն ու տեսակները, ժամկետները և հաշվարկման կարգը, պետական ծառայության հատուկ տեսակ դարձնող հատկանիշները, այլընտրանքային ծառայությունը՝ որպես երկրի պաշտպանությանը քաղաքացիների մասնակցության ձև, զինծառայողների իրավական կարգավիճակի հասկացությունը և առանձնահատկությունները, զինված ուժերում օրինականության ու կարգապահության ապահովման միջոցները, զինծառայողների պատասխանատվության իրավական հիմքերը և տեսակները, ինչպես նաև զինված ընդհարումների իրավունքի դերակատարությունը զինվորական իրավունքի համակարգում, Ժննի, Հաագայի իրավունքների դրույթների կիրառումը պատերազմների (զինված ընդհարումների) ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա զինվորական իրավունքի հասկացությունը և աղբյուրները, դերը երկրի ռազմական շինարարության գործում, ՀՀ քաղաքացիների՝ երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը,

կատարման ձևերը, զինվորական ծառայության հասկացությունը, բովանդակությունն ու տեսակները, զինծառայողների իրավական կարգավիճակի հասկացությունը և առանձնահատկությունները, զինված ուժերում օրինականության ու կարգապահության ապահովման միջոցները, զինծառայողների պատասխանատվության իրավական հիմքերը և տեսակները, ինչպես նաև ընդհարումների իրավունքի դերակատարությունը զինվորական իրավունքի համակարգում:

2. կկարողանա ներկայացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումները, որի միջոցով հնարավոր է դառնում առավել համակարգված տեսքով պատկերացնելու երկրի ռազմական անվտանգության ապահովման, պաշտպանական ոլորտի կառավարման, պետական ծառայության հատուկ տեսակ հանդիսացող զինվորական ծառայության անցնելուն վերաբերող, ինչպես նաև զինվորական ընդհարումների ժամանակ միջազգային հանրաճանաչ նորմերի ու սկզբունքների պահպանման հարցերը և սկզբունքային առանձնահատկությունները:

3. կտիրապետի ՀՀ պաշտպանության բնագավառի իրավական կարգավորումների և ընթացակարգերի առանձնահատկությունները, թե զինվորական-ծառայողական իրավահարաբերություններին վերաբերող հարցերը, դրանց օրենսդրական ամրագրումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Չինվորական իրավունքի հասկացությունը և աղբյուրները: Չինվորական իրավունքի տեղը պետության իրավական համակարգում: **Թեմա 2**՝ Չինվորական իրավունքի դերը երկրի ռազմական շինարարության գործում: **Թեմա 3**՝ ՀՀ ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում: **Թեմա 4**՝ ՀՀ ռազմական կազմավորման համակարգը ռազմական անվտանգության ապահովման գործում: **Թեմա 5**՝ Պետության պաշտպանության իրավական կարգավորման ապահովումը: **Թեմա 6**՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի կառավարման համակարգը: **Թեմա 7**՝ ՀՀ քաղաքացիների զինապարտության հասկացությունը և բովանդակությունը: **Թեմա 8**՝ Չինվորական ծառայության հասկացությունը և պետական ծառայության հատուկ տեսակ դարձնող հատկանիշները: **Թեմա 9**՝ Չինվորական ծառայության բովանդակությունը և տեսակները: **Թեմա 10**՝ Սյլընտրանքային ծառայությունը՝ որպես երկրի պաշտպանությանը քաղաքացիների մասնակցության ձև: **Թեմա 11**՝ Չինվորական ծառայության գորակոչը: Չինվորական ծառայությունից ազատելու և զորակոչից տարկետում տալու հիմքերը: **Թեմա 12**՝ Չինվորական ծառայության ժամկետները, ծառայության սկիզբը և ավարտը: **Թեմա 13**՝ Չինծառայողների իրավական կարգավիճակի հասկացությունը և առանձնահատկությունները: **Թեմա 14**՝ Չինծառայողների իրավական կարգավիճակի բովանդակությունը: **Թեմա 15**՝ Չինված ուժերում օրինականության և զինվորական կարգապահության հասկացությունը, դերը և նշանակությունը: **Թեմա 16**՝ Չինծառայողների իրավական պատասխանատվության հասկացությունը և նշանակությունը, տեսակները: **Թեմա 17**՝ Չինված ընդհարումների իրավունքի ենթաճյուղի հասկացությունը և բովանդակությունը: **Թեմա 18**՝ Ժնկի, Հաագայի իրավունքների դերը պատերազմների (զինված ընդհարումների) ժամանակ

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M06. Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ (5 կրեդիտ)

Շարաթական 3 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ներկայացնել վարչարարության և վարչական վարույթի հասկացությունները, վարչարարության հիմնարար սկզբունքները, գործերի ենթակայությունը վարչական մարմիններին, վարչական մարմինների փոխօգնությունը, վարչական վարույթի փուլերը, ժամկետներն ու մասնակիցները, վարչական մարմինների պաշտոնատար անձանց կողմից գործերը քննարկելու և լուծելու անհնարիությունը, բացարկ ու ինքնաբացարկ հայտնելը, վարչական ակտի հասկացությունը, տեսակներն ու ձևերը, վարչարարության շրջանակներում բողոքարկման վարույթի և վարչական ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունները, նաև վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության ժամանակ վնասի հատուցման նախապայմանները, եղանակները, ընթացակարգը: Ուսումնասիրվում են նաև վարչական արդարադատության իրավական ինստիտուտը, առաջացման նախադրյալները, արտասահմանյան երկրներում վերջինիս ձևավորման ու զարգացման պատմական օրինաչափությունները, առնչությունը մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդիրներին, ինչպես նաև վարչական դատավարության հասկացությունն ու նշանակությունը և վարչական գործի դատական քննության հիմունքները, Վարչական դատավարության կազմակերպման իրավական ապահովումը մեր երկրում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա վարչարարության և վարչական վարույթի հասկացությունները, վարչարարության հիմնարար սկզբունքները, առանձին ինստիտուտների նկարագիրները, վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության ժամանակ վնասի հատուցման նախապայմանները, եղանակները, ընթացակարգը, վարչական արդարադատության իրավական ինստիտուտը, առաջացման նախադրյալները, ինչպես նաև վարչական դատավարության հասկացությունն ու նշանակությունը և վարչական գործի դատական քննության հիմունքները, կազմակերպման իրավական ապահովումը մեր երկրում:

2. կկարողանա ուսումնասիրել ՀՀ-ում վարչարարության հիմունքները, վարչական վարույթի անցկացման հիմնադրույթները, ներկայացնել վարչական ակտերի ընդունման և կիրառման առանձնահատկությունները, հետազոտել վարչական արդարադատության և դատավարարության իրականացման ժամանակյան առաջացող հարաբերությունների իրավական կարգավորումները:

3. կտիրապետի վարչական բնագավառում վարչարարության և վարչական վարույթի արտադատական ընթացակարգերի առանձնահատկությունները, վարչական դատավարական գործընթացներին վերաբերող հարցերը, դրանց օրենսդրական ամրագրումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վարչարարության և վարչական վարույթի հասկացությունները, կիրառման շրջանակները, օրենսդրական հիմքերը: **Թեմա 2**՝ Վարչարարության հիմնարար սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 3**՝ Գործերի ենթակայությունը վարչական մարմիններին, վարչական մարմինների փոխօգնությունը: **Թեմա 4**՝ Վարչական վարույթի փուլերը և մասնակիցները, ներկայացուցչությունը վարչական վարույթում: **Թեմա 5**՝ Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործերը քննարկելու և լուծելու անհնարինությունը, բացարկ ու ինքնաբացարկ հայտները: **Թեմա 6**՝ Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, իրականացման լեզուն, արձանագրություն կազմելը, վարչական ծախսերը: **Թեմա 7**՝ Վարչական վարույթի ժամկետները, վարույթը կասեցնելը, կարճելը և վերսկսելը: **Թեմա 8**՝ Վարչական ակտի հասկացությունը, տեսակներն ու ձևերը: **Թեմա 9**՝ Վարչական ակտի ընդունելն ու իրագրվելը, որոշակիությունը և հիմնավորումը: **Թեմա 10**՝ Վարչական ակտը առ ոչինչ, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը և ընթացակարգը: **Թեմա 11**՝ Բողոքարկման հիմքերն և բողոքների քննարկման կարգը: **Թեմա 12**՝ Վարչական ակտի հարկադիր կատարման ապահովումը: **Թեմա 13**՝ Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար, կրողը և հիմքերը: **Թեմա 14**՝ Վնասի հատուցման նախապայմանները, եղանակները և ընթացակարգը: **Թեմա 15**՝ Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը, ոչ գույքային վնասը դրամական միջոցներով հատուցելու ձևերը: **Թեմա 16**՝ Վարչական արդարադատության իրավական ինստիտուտը, առաջացման նախադրյալները: **Թեմա 17**՝ Վարչական արդարադատության հասկացությունը և իրավական ապահովումը: **Թեմա 18**՝ Արտասահմանյան երկրներում վարչական արդարադատության ձևավորման ու զարգացման պատմական օրինաչափությունները: **Թեմա 19**՝ Վարչական արդարադատության ինստիտուտը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդիրները: **Թեմա 20**՝ Վարչական դատավարական իրավունքը Հայաստանի Հանրապետությունում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

06/M07. ՀՀ ընտրական իրավունք և համակարգեր (3 կրեդիտ)

Շարաֆական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակը ուսանողներին ընտրությունների ողջ գործընթացի, օրենսդրության վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների

մատուցումն է: Դասավանդման հիմքում ընտրական տարբեր համակարգերի ու տեխնոլոգիաների յուրահատկությունների համեմատական վերլուծությունն է ու դրա հիման վրա Հայաստանի ընտրական ոլորտի մանրամասն ուսումնասիրությունը: Այս գիտելիքների իմացությունն ու հմտությունների տիրապետումը թույլ է տալիս քաղաքացիական որոշակի դիրքորոշմամբ ներգրավվել ընտրությունների գործընթացներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** «ընտրական իրավունք» և «ընտրական համակարգ» հասկացությունների տարբերությունները:

2. **Կկարողանա** որոշել ու տարբերակել ընտրական իրավունքի ու ընտրական համակարգի ինստիտուտները:

3. **Կտիրապետի** ընտրական իրավունքի ու ընտրական համակարգի հիմնական բնութագրիչների վերլուծության սկզբունքներին:

Բովանդակությունը.

